ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Վահագն Վերմիշյանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 1-4-ը Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնև)՝ Ազգերի պալատում ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Կայուն քաղաքների շաբաթ» խորագրով միջոցառմանը մասնակցելու նպատակով գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝ Վահագն Վերմիշյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ

3.Գործուղման վայրը և ժամկետը՝ Ժնև (Շվեյցարիայի Համադաշնություն, 2019 թվականի հոկտեմբերի 1-4-ը)

4.Հրավիրող կողմը՝ Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողով

5.Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

2019 թվականի հոկտեմբերի հոկտեմբերի 1-ից 4-ը Շվեյցարիայի Ժնև քաղաքում կայացավ ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ-ի ԵՏՀ) կողմից կազմակերպված «Կայուն քաղաքների շաբաթ» խորագրով միջոցառումը, իսկ հոկտեմբերի 2-ից 4-ը՝ Բնակարանային տնտեսության և հողի կառավարման Կոմիտեի 80-րդ նստաշրջանը: Բնակարանային տնտեսության և հողի կառավարման Կոմիտեի 80-րդ նստաշրջանին (հոկտեմբերի 1-ից 4-ը, 2019թ.) և հարակից միջոցառումներին մասնակցեցին ՄԱԿ-ի ԵՏՀ 56 անդամ երկրներից և ազգային և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի, ակադեմիայի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

Առանձնապես կարևորվում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Վահագն Վերմիշյանի մասնակցությունը, քանի որ Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողովի Բնակարանային և հողի կառավարման կոմիտեն միակ միջկառավարական մարմինն է, որն անդրադառնում է ՄԱԿ-ի ԵՏՀ տարածաշրջանի բնակարանային մարտահրավերներին և կայուն բնակարանային ու

քաղաքային զարգացման, հողի կառավարման, տարածական պլանավորման և անշարժ գույքի շուկայի կայունության հետ կապված հարցերի փոխանակման և համագործակցության միջազգային հարթակ է տրամադրում:

6. Քննարկված թեմաները՝

Քննարկված թեմաներից առավել արդյունավետ և բովանդակալից բնույթ կրեցին հետևյալ թեմաները՝

«Կայուն քաղաքների շաբաթ» խորագրով միջոցառման ընթացքում անցկացվող հանդիպումների ժամանակ քննարկվեցին վերջին միջազգային համաձայնագրերի իրականացմանն առնչվող առաջընթացն ու մարտահրավերները՝ ինչպիսիք են Կայուն զարգացման 2030 օրակարգը, Նոր քաղաքային օրակարգը, Կայուն Բնակարանային Տնտեսության ՄԱԿ-ի Ժնևյան Խարտիան: Քննարկվեցին նաև հետևյալ թեմաները՝

1. Կլոր սեղան քննարկում ՝ «Կայուն զարգացման նպատակ 11»
2. 2018-2019թթ. աշխատանքային ծրագրի իրականացման վերանայում Կայուն բնակարանային տնտեսության և քաղաքաշինության համար ապացույցների վրա հիմնված քաղաքականություն
3. Կայուն բնակարանային տնտեսություն և անշարժ գույքի շուկաներ
4. Կայուն քաղաքային զարգացում և խելացի կայուն քաղաքներ
5. Հողի կառավարում
6. Քաղաքաշինության, բնակարանային տնտեսության և հողի կառավարման վերաբերյալ Երկրի նկարագրեր:

Հաբիթաթի համաշխարհային օրվա տոնակատարության շրջանակներում տեղի ունեցավ «PUSH» վավերագրական ֆիլմի ցուցադրություն, որն ուսումնասիրում էր, թե ինչու մարդիկ չեն կարող իրենց թույլ տալ այլևս ապրել իրենց քաղաքներում:

7.Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր՝

Հանդիպումներ տեղի ունեցան ՄԱԿ-ի ԵՏՀ անդամ երկրների և ազգային և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև այլ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Վահագն Վերմիշյանը ելույթով հանդես եկավ Բնակարանային

տնտեսության և հողի կառավարման Կոմիտեի 80-րդ նստաշրջանին և ներկայացրեց Հայաստանում բնակարանային տնտեսության և քաղաքաշինությանմ ոլորտին առնչվող խնդիրները և ձեռքբերումները:

10. Գործուղվող - Վահագն Վերմիշյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը – ***9.10.2019 թվական***